



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 163 ԵՂ 22 09 2017

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ-ում ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ գրականության ապահովման մակարդակը բարելավելու, գրականության թվայնացման գործընթացը խթանելու և հանձնարարվող գրքերն ուսանողների կողմից ձեռքբերման գործընթացում էթիկայի կանոններն առավելագույնս պահպանելու նպատակով.

Հրամայում եմ.

1. ԵՊՀ ֆակուլտետների ղեկաններին և ուսումնական կենտրոնների ղեկավարներին՝ մեկամսյա ժամկետում ԵՊՀ գրադարանի տնօրենին ներկայացնել բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ (հանձնարարվող) գրականության ցանկը (ըստ առարկաների և անհրաժեշտ քանակների):
2. ԵՊՀ գիտական գրադարանի տնօրենին՝ երկամսյա ժամկետում ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ԵՊՀ գրադարանում բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ գրականության առկայության վերաբերյալ (այդ թվում թվայնացված կամ ԵՊՀ համացանցային պորտալում դասախոսությունների կամ ուսումնական ձեռնարկների տեղադրված լինելու մասին), ինչպես նաև առաջարկություն անհրաժեշտ գրականության ձեռքբերման և այլ աշխատանքների մասին:
3. Սահմանել, որ հանձնարարվող գրքերն ուսանողների կողմից ձեռք են բերվում կամավորության սկզբունքով, իսկ ԵՊՀ-ում գրքերի վաճառքը թույլատրվում է միայն ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում գտնվող գրքերի վաճառքի տաղավարում:
4. ԵՊՀ գիտական խորհրդին կից էթիկայի մշտական հանձնաժողովին՝ մեկամսյա ժամկետում առաջարկություն ներկայացնել ուսանողներին պրոֆեսորադասախոսական անձնակազմի և այլ աշխատողների կողմից գրականության (այդ թվում նրանց կողմից հեղինակած) ձեռքբերման վերաբերյալ առաջարկությունների, խորհուրդների կամ ուղորդումների թույլատրելի էթիկական սահմանների հստակեցման և համապատասխանաբար՝ ԵՊՀ ներքին իրավական ակտերում ամրագրման վերաբերյալ:
5. Սույն հրամանի մասին տեղյակ պահել ԵՊՀ կոլեկտիվի անդամներին և ուսանողներին:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԵԿՏՈՐ

Ա.ՄԻՍՈՆՅԱՆ